

**ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԸ
ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ՆՈՐ ՄԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ**

Բանալի բառեր՝ Հոմերոս, Վերգիլիոս, «Իլիական», «Ջենեական», գրաբար, հին հունարեն, լատիներեն, տառադարձում, թարգմանություն, հնչյունափոխություն, հունականացում, հայկականացում:

Հունա-հոմեական գրական կոթողները թարգմանելիս Գոհար Մուրադյանը և ես առիթ ենք ունեցել ի մոտո ուսումնասիրելու Մխիթարյան հայրերի թարգմանությունները, որոնցից սույն հոդվածում խոսելու ենք հատկապես Հոմերոսի «Իլիական»-ի գրաբար և Վերգիլիոսի «Ջենեական»-ի գրաբար ու արևմտահայերեն թարգմանությունների մասին¹:

Հոմերոսի (ժամանակը ստույգ հայտնի չէ, հավանաբար մ.թ.ա. 8-րդ դար) «Իլիական»-ը, որում նա պատմում է հույն-տրոյական պատերազմի և Փոքր Ասիայի Իլիոն կամ Տրոյա քաղաքի պաշարման գրվագներ, եղել և մնում է անտիկ գրականության ամենահեղինակավոր երկերից մեկը (եթե ոչ ամենահեղինակավոր երկը)² ինչպես հնում, այնպես էլ նոր ժամանակներում: Վենետիկի Մխիթարյան հայրերն իրենց մշակութաստեղծ գործունեության ընթացքում չէին կարող անտեսել այդ պոեմը: «Իլիական»-ը երկու անգամ լույս է տեսել գրաբար թարգմանությամբ. 1843 թ. տպագրվել է Եղիա Թոմաճյանի հանգավորված²

¹ «Իլիական»-ի մեր բնագրային թարգմանությունն ընթացում է, իսկ «Ջենեական»-ն արդեն լույս է տեսել՝ **Վերգիլիոս, Ջենեական**, լատիներենից թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Գոհար Մուրադյանի** և **Արամ Թոփչյանի**, Երևան, «Զանգակ», 2018 (երկրորդ, բարեփոխված հրատարակություն՝ 2018): «Իլիական»-ի ու «Ոդիսական»-ի՝ Արսեն Ղազիկյանի արևմտահայերեն թարգմանություններին (1911 և 1924) կանոնադաշտնափոխ առիթով:

² Հիշեցնենք, որ անտիկ գրականության մեջ հանգ չի օգտագործվել: Թոմաճյանը կիրառել է կից հանգավորում (ԱԱ, ԲԲ, ԳԳ և այլն):

Թարգմանությունը³, իսկ 1864-ին՝ Արսեն Բագրատունու թարգմանությունը⁴: երկու թարգմանությունն էլ, ինչպես և բուն գործը, բաժանված են 24 երգի⁵, որոնք Թոմաճյանը կոչում է «հագներգություն»⁶, իսկ Բագրատունին՝ «երգ», սակայն երկուսում էլ բացակայում են տողահամարները, որոնք ընդունված են նոր ժամանակների գրեթե բոլոր հրատարակություններում և թարգմանություններում: Նշենք, որ Արսեն Բագրատունու թարգմանությունը՝ ճոխ, երբեմն խրթին գրաբարով, շատ ավելի ճշգրիտ է⁷, քան եղիա Թոմաճյանինը: Հավանաբար դրա պատճառներից մեկը վերջինիս կիրառած հանգավորումն է, որը թարգմանիչներին հաճախ հեռացնում է բնագրից:

«Իլիական»-ում հանդիպող բազմաթիվ հատուկ անունները հայերեն տա-

- ³ Հովհերոսի եղիական, թարգմանեաց ի հելլենական է հ. եղիա Թոմաճեան, հատոր Ա, Բ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1843: 1848 թ. լույս է տեսել նաև Թոմաճյանի՝ Հովհերոսի «Ողիսական»-ի թարգմանությունը երկու հատորով:
- ⁴ Հովհերի Իլիական, հան ի հայ հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1864: 1783 թ. «Իլիական»-ը գրաբար էր թարգմանել Գևորգ Դպիր Պալատեցին: Թարգմանությունն անտիպ է. երկու ընդօրինակություններից մեկը պահվում է Մատենադարանում, մյուսը՝ Վենետիկում. տե՛ս Մ. Սարգսյան, «Գևորգ Դպիր Պալատեցին լեզվաբան-բառարանագիր (1737–1811)», ԲՄ 20, 2014, էջ 205, ծան. 4. ձեռագրերի համարները նշված չեն:
- ⁵ Այդ փաստը հայտնի էր արդեն Դիոնիսիոս Թրակացու Բերականական երկի Դավիթ մեկնիչին. «Ի Հովհերոս է ասացեալ Բերդացածն ... բաժանումն գործեցաւ յաղագս դիւր ուսման մանկանց յերկուս գիրս՝ յիղիական եւ յՈղիսական ի քսան եւ չորս ճառս», տե՛ս «Դավթի փիլիսոփայի մեկնութիւն Բերականին», Նիկողայոս Աղոնց, Երկեր հինգ հատորով. Գ, Հայերէնագիտական ուսումնասիրութիւններ, Երևան, 2008, էջ 9:
- ⁶ Այս բառը ստեղծել է Դիոնիսիոս Թրակացու Բերականական երկի թարգմանիչը՝ որպէս հունարէն ῥαψωδία-ի («երգեցողություն, էպիկական պոեմ, էպիկական պոեմի մաս») պատճենում. տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ Բերականին», Նիկողայոս Աղոնց, Երկեր հինգ հատորով. Գ, էջ 4: Արդեն Դիոնիսիոսը լավ չի հասկացել «ոսպտողիա» բառի կազմությունը՝ փորձելով այն կապել «ոսպտողիա»-ի (ῥαψωδία) հետ (իբր՝ գավազանով [ῥάψδος-ով] կատարվող երգ) և բացատրելով, որ ոսպտողները դափնու գավազանով շրջելով էին երգում Հովհերոսի պոեմները: Իրականում «ոսպտողիա»-ն առնչվում է ῥάπτω («կարել, կազմել, հորինել») և փճի («երգ») բառերին: «Հագներգութիւն» բառը թարգմանիչը կազմել է «հագներմ» և «երգ» բառերից: Քանի որ «հագներմ» բայն այլուր ավանդված չէ, Աճառյանը բացատրում է այն իբրև «կարել, կարկատել» (Ա. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հտ. 3, էջ 4): Ի դեպ, Թրակացու բառը գավազանի հետ կապելը հայտնի էր Գրիգոր Մագիստրոսին, քանի որ Բերականության իր մեկնության մեջ նա գրում է. «Հագներգութիւն ըստ հռոմիւն լսի գաւազաներգութիւն, վասն զի սարդենի գաւազանաւ ... երգեն զհոմերական Բերդածն»։ տե՛ս ՄԶ, ԺԶ հատոր, ԺԱ դար, Երևան, 2013, էջ 410:
- ⁷ Հմմտ. Ա. Ղազիկեան, «Հ.Ա.Կ. Բագրատունի եւ Հովհերոսի Իլիականին թարգմանությունը», Բազմավէպ 58, 1900, էջ 65–72, 161–170. Ղազիկյանը հիացած է Բագրատունու հորինած բարդ մակդիրներով և հատկապես հունարէն նույն մակդիրի համար մի քանի հայերէն համարժեք կերտելու ունակությամբ: Նա գրում է. «Ինչպէս Հովհերոսի Իլիականը շտեմարան է ամենայն գիտելեաց, տյնպէս և հայերէն թարգմանութիւնը զարդ և պսակ է հայերէն լեզուի անհամեմատ գեղեցկութեան», էջ 170:

ռազարձելիս երկու թարգմանիչն էլ ձգտել են ճշգրտություն: Օրինակ՝ ճշգրիտ են հետևյալ տառադարձումները. «Ատրիդէս»⁸, «Կալքաս», «Ագամեմնոն», «Հեկտոր», «Արէս» (բայց և «Արիս»⁹ [Բագր.]) և շատ ուրիշներ:

Բագրատունին նախընտրել է «Աքիլլեւս» ճշգրիտ տառադարձումը հունարենից, մինչդեռ Թոմաճյանի «Աքիլլէս»-ը լատիներեն *Achilles*-ի միջնորդությունով նոր լեզուներում տարածված ձևն է: Նա գրում է նաև «Աքիլլ»՝ բանաստեղծական չափի պարտադրանքով: Նույն կերպ են բացատրվում և մյուս համառոտված ձևերը՝ «Ագամեմնոն», «Ագամեմնի» (Բագր.), «Իդոմեն» (փխ. Իդոմենեւս), «Պրիամ» (Բագր.՝ փխ. Պրիամոս), «Պոլիփեմ» (Բագր.՝ փխ. Պոլիփեմոս), «Սարպեդ» (Թոմաճ.՝ փխ. Սարպեդոն), «Դեփոբոս» (Թոմաճ.՝ փխ. Դեփոբոս), «Եւիպ» (Թոմաճ., հմմտ. Բագր. «Եւիպոս»), «Դոմեդ» (Թոմաճ.՝ փխ. Դիոմեդէս):

Էնեասի անունը Բագրատունին տառադարձել է «էնիաս», Թոմաճյանը՝ «Ենեաս»: Հին հունարենում կա և՛ էնեյաս/էնիաս, և՛ էնեաս տարբերակը:

Բագրատունու կիրառած «Ողիսեւս», «Թեսեւս», «Կենեւս», «Պելեւս», «Մենեսթեւս», «Իփեւս» ձևերը ճշգրիտ են, մինչդեռ Թոմաճյանը փոխել է վերջավորությունները, այն էլ՝ տարբեր կերպ. «Ողիւսէս», «Թեսէոս», «Կենէոս», «Պելղոս», «Մենեսթոս», «Իփաս»: Անունների վերջավորությունները (և ամբողջ անունները) ազատորեն ձևափոխելու այս պրակտիկային հետևել է նաև Համազասպ Համբարձումյանն «Իլիական»-ի ու «Ողիսական»-ի իր թարգմանություններում¹⁰:

Աթենա դիցուհու անվան՝ հայերենում լայն տարածում գտած «Աթենաս» տարբերակն իրականում հունարենի սեռական հոլովածն է, որից պետք է հրաժարվել:

Հունարեն լ-լ-ն Բագրատունին տառադարձել է լ-ով, իսկ Թոմաճյանը, հին թարգմանիչների հետևությունով՝ դ-ով¹¹. «Լետով» – «Դետով», «Ապոլոն» – «Ապոդոն», «Իլիոն» – «Եղիոն» (հմմտ. վերը՝ «Ենեաս»), «Ողիւմպեան» – «Ոլիմբական/Ոլիմբեան», «Կլիտեմնեստրէ» – «Կղիտեմնեստրա», «Ալեքսանդրոս» – «Աղեքսանդրոս», «Հելենէ» – «Հեղինէ» (բայց «Հելենոսը» Թոմաճյանը տառադարձել է «Եղենոս»), «Պիլոս» – «Պիւլ», «Պոլիմէլ» – «Պողիմեղոս», «Տլէպ-

⁸ Քանի որ բազմաթիվ անուններ սփռված են բնագրով մեկ, նպատակահարմար չգտանք նշել դրանց տեղերը: Եթե մեջբերված բառի կողքին նշում չկա, ուրեմն երկու թարգմանություններում էլ այդ ձևը նույնն է:

⁹ «Արէս»-ը համապատասխանում է Արիս-ի հին հունարեն հնչողությանը, իսկ «Արիս»-ն անվան միջնադարյան և նոր ժամանակների արտասանությունն է:

¹⁰ **Հովհաննես Իլիական**, հին հունարեն բնագրից թարգմանեց՝ Համազասպ Համբարձումյան, Երևան, «Հայպետհրատ», 1955 և **Հովհաննես Ողիսական**, հին հունարեն բնագրից թարգմանեց՝ Համազասպ Համբարձումյան, Երևան, «Հայկական ՍՍԻ ԳԱ հրատարակչություն», 1958:

¹¹ Ինչպես Ղազարոս, Ղուկաս, Պղատոն, Աղեֆանդր, Քաղկեդոն և այլ անուններում:

տղեմ» – «Տղեպտողեմ» (երկուսն էլ վերջին «-ոս»-ը զանց են առել), «Պատրոկղես» (Թոմաճ.) – «Պատրոկլոս»¹² (Բագր.), «Պելիսածին» (Բագր.) – «Պելղոսեան» (Թոմաճ., երկուսն էլ փոխել են Աքիլլեսի հոր՝ Պելևսի անվան վերջավորությունը):

Վերոբերյալ օրինակները վկայում են նաև, որ Թոմաճյանը հունարեն Ս-ն տառադարձել է հին հունարենի հնչողությունը հարազատ՝ «իւ», իսկ Բագրատունին՝ «ի», ինչպես այդ տառը հնչում էր արդեն վաղ միջնադարում: Հմմտ. նաև «Լիւկիա» – «Լիկիա», «Պիւռէ» – «Պիրիա»:

Նույն տրամաբանությամբ Թոմաճյանի «Այաս» տարբերակում վերականգնված է հին հունարեն երկհնչյունը, իսկ Բագրատունու «էաս»-ն¹³ արտացոլում է դրա ավելի ուշ արտասանությունը:

Իսկ «Պոսիդոն» ձևում երկուսն էլ արտացոլել են Պոսեյդոն անվան մեջ Ջ երկհնչյունի՝ «ի»-ի հնչյունափոխված տարբերակը: Հանդիպում է նաև «Պիսիդոն»¹⁴ (Թոմաճ.):

Հետևյալ անվանաձևերը դիտում ենք որպես հայերենի հնչյունաբանությանը հարմարեցնելու փորձեր՝ «Մաքաւովն» (Մաքաոն), «Մերովփս» (Մերոպս), «Կով» (Կոս կղզին): Հունարեն օմեգայի (Ω) «ով» տառադարձումը սովորական երևույթ էր և՛ Աստվածաշնչի (օրինակ՝ «Յակովբոս», «Թովմաս», «հովմայեցի»), և՛ այլ երկերի հին թարգմանություններում¹⁵: Նաև Մենեւաոս անվան «Մենեւաւ» (Բագր.) – «Մենեղաւ/Մենեղաւոս» (Թոմաճ) տառադարձումները:

Հոմերոսը Զեւսին հաճախ անվանում է «Կրոնոսի որդի»: Կրոնոսի անունը դեռևս հին թարգմանիչները (Ե-Ը դդ.) փոխարինել են «Զրուան»-ով, իսկ նրա որդուն կոչել «Զրուանեան»: Ուստի և՛ «Զրուանեան» (Թոմաճ.) – «որդին Զրուանայ» (Բագր.), Կրոնոսն ինքն էլ «Զրուան»: Հնում Զեւսի անունը հաճախ թարգմանվել է «Արամազդ», և Մխիթարյան երկու թարգմանիչն էլ նրան այդպես են կոչել, չնայած հանդիպում են նաև «Որմիզդ» և «Որմզդեան» անունները (Թոմաճ., բայց ունի նաև «Զեւս»): Մեկ անգամ «Որմիզդ» է հանդիպում նաև մի հին

¹² Այս անունը հենց «Իլիական»-ի բնագրում առկա է մե՛րթ Պատրոկլոս, մե՛րթ Պատրոկլես տարբերակներով:

¹³ Նոր լեզուներում տարածված այդ անվան Այաֆս ձևը սերում է լատինականացված Ajax տարբերակից:

¹⁴ Պոսեյդոնի անվան այս ձևն են օգտագործել Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը և Վարդան Արևելցին. տե՛ս **Գոհար Մուրադյան**, *Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ*, Երևան, «Նաիրի», 2014, 31:

¹⁵ **G. Uluhogian**, « Problèmes d'onomastique dans la version arménienne des Progymnasmata de Théon », ՀԱ 1987 (էջ 669–675), էջ 671. հեղինակն ի թիվս այլ օրինակների նշում է «եզովպոս»:

Թարգմանություն մեջ¹⁶: Աֆրոդիտեի անվան սովորական համարժեքը «Աստղիկ»-ն է¹⁷:

Զևսի անվան փոխարեն կարդում ենք նաև «Դիոս» (Թոմաճ.) և դրա գրաբար սեռականը՝ «Դիայ» (Բագր. Թոմաճ.): Մինչդեռ հին հունարենում «Դիոսը» «Զևսի» սեռական հոլովածն է (Διός), որ «-ոս» վերջավորության պատճառով ընկալվել է իբրև ուղիղ ձև ու այդպես կիրառվել թե՛ հին, թե՛ նոր թարգմանություններում:

Ստորերկրայքի Հադես աստծո անունը երկուսն էլ թարգմանել են «Անդրնդեհպետ», Բագրատունին նաև՝ «Հայդէս սանդարապետ», «Սանդարամետ»: Առաջին բառը, ըստ ՆԲՀԼ-ի («Անդնդեհպետ» ձևով)՝ վկայված է Հովհաննես Երզնկացու՝ քերականության մեկնության մեջ. նշանակում է «դեհպետ անդնդոց դժոխոց»: Իսկ «Հայդէս»-ն արտացոլում է հունարեն Άϊδης ձևը, որում Ն-ն միայն գրվում է, չի արտասանվում, սակայն Բագրատունին այն տառադարձել է:

Ծիածանի Իրիս աստվածուհու անունը Բագրատունին տառադարձել է «Իռիս», իսկ Թոմաճյանը «Թարգմանել» է «հիրիկ»: Այդ բառը մեկ անգամ ավանդված է Աստվածաշնչում (Ել. Լ. 24) որպես բուսանուն, բայց քանի որ հունարենում համանուն է «ծիածան» իմաստով բառին, ՆԲՀԼ-ի հեղինակներն այն բացատրել են նախ որպես «ծիածան»:

Անունների թարգմանություն այլ օրինակներ էլ կան. Ապոլլոնի մյուս՝ «Փեբոս» անունը Բագրատունին թարգմանել է «Գուշակ»¹⁸ (հավանաբար որպես Հունաստանի գլխավոր՝ Դելփիի պատգամատան տիրոջ), մինչդեռ Թոմաճյանը պահել է «Փեբոս» ձևը, ինչպես և «Պեգասոս» ձիու անունը, որը Բագրատունին դարձրել է «Կայտառ» (սակայն «պեգասոս» ածական հունարենում չկա): Ընդհակառակը՝ Բագրատունին տառադարձել է Բրիսևսի դստեր «Բրիսէիս» և Քրիսեիսի դստեր «Քրիսեիս» անունները, իսկ Թոմաճյանը թարգմանել է «Բրիսանոյշ» և «Խրիսանոյշ»¹⁹: Քարիսների անունը երկուսն էլ թարգմանել են «Շնորհք»: Համապատասխան հունարեն ածականը բազմիմաստ է՝ «նազանք, հմայք, փառք, բարյացակամություն, վայելք, պատկառանք, պատիվ, շնորհակալություն». Քարիս աստվածուհիների անունը թերևս կապվում է «նազանք,

¹⁶ Գ. Մուսաղյան, «Օտար անունների արտահայտումները հունաբան թարգմանություններում», Աշտանակ (Հայագիտական պարբերագիրք) Ա, Երևան, 1995 (էջ 151–165), էջ 154, 156:

¹⁷ Նույն տեղում, էջ 155: Դիցանունների հայկականացված այս տարբերակներն է օգտագործել նաև Մկրտիչ Խերանյանը գրաբարից (և ռուսերենից) կատարած իր թարգմանության մեջ. Հովհաննես, Իլիական, գրաբարից թարգմանեց՝ Մկրտիչ Խերանյան, Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 1987:

¹⁸ Այնինչ հունարեն համապատասխան ածականը (φοῖβος), նշանակում է «լուսավոր, պայծառ»:

¹⁹ Հմմտ. «Աստուածունի» (Բագր.) – «ղիցանոյշ» (Թոմաճ.):

հմայք» իմաստի հետ: Վրիժառուության աստվածուհի էրինիսի անունը Բագրատունին թարգմանել է «Պատուհաս» (Թոմաճյանը տառադարձել է «Երիննէս»), ճակատագրի աստվածուհի Մոյրայինը՝ «Բաշխ» (իսկ Թոմաճյանը՝ «Բախտ»), խելահեղության/աղետի աստվածուհի Ատեինը՝ «Եղեռն» (Թոմաճյանը տառադարձել է «Ատէ»): Զիերի անունները Թոմաճյանը տառադարձել է, իսկ Բագրատունին թարգմանել՝ արտացոլելով համապատասխան ածականների իմաստը. «Քսանթոս» – «Աշխէտ», «Բալիոս» – «Պիսակ», «Պոտագրոս» – «Ճեպոտեա»:

Հետեւելով հին թարգմանիչներին, որոնք երբեմն պատճենել են հունարենի կոչական հոլովի վերջավորությունը՝ Թոմաճյանն ու Բագրատունին օգտագործել են այսպիսի ձևեր. «Պատրոկլէ» (Բագր.)²⁰, «Պատրոկղէ» (Թոմաճ.), «Մենելաէ» (Բագր.), «Տեկրէ» (Թոմաճ.), «Սմինթեւ» (Թոմաճ.), որն Ապոլլոնի Սմինթեւ մակերի կոչականի ճշգրիտ պատճենումն է (հմտ. Բագր. «Զմինթեանդ»):

Ինչ վերաբերում է հունարեն հայրանուններին՝ «այսինչի որդի (երբեմն թոռ)» իմաստով, դրանք արտահայտվում են տարբեր համարժեքներով.

Ատրեւի որդի Ագամեմնոն կամ Մենելաոս՝ «Ատրիդէս», «Ատրեանք», «Ատրիդայք» (Բագր.) – «Ատրեսեան/Ատրիսեան/Ատրիդ», «Ատրեոսեան», «Ատրեսեանք» (Թոմաճ.):

Պրիամոսի որդի Հեկտոր՝ «Պրիամեան» (Բագր.) – «Ճետ Պրիամուն/Պրիամոսեան» (Թոմաճ.),

Պելևսի որդի Աքիլլես՝ «Պելիսածին» (Բագր.) – «Պելոսեան» (Թոմաճ.),
 էակոսի թոռ Աքիլլես՝ «էակիդէս», «էակեան» (Բագր.),
 Տիդևսի որդի Դիոմեդես՝ «Տիդեան» (Բագր.) – «Տիդեայ որդի» (Թոմաճ.),
 Տելամոնի որդի Այաս՝ «Տելամոնեան» (Բագր.) – «Տեղամոնեան» (Թոմաճ.),
 Մենեսիոսի որդի Պատրոկլոս՝ «Մենիտեան որդի» (Բագր.) – «Մենետեան» (Թոմաճ.),

Պանթոոսի որդի Եվփորբոս՝ «Պանթոսեան» (Թոմաճ.), «Պանթեանք» (Թոմաճ., եղբայրների հետ) – «Պանթոյեան» (Բագր.), «Պանթոյայ ճետ» (Բագր.) և այլն:

Պուբլիոս Վերգիլիոս Մարոյի (մ.թ.ա. 70–19) «էնեական» մեծակտավ էպիկական պոեմը, որ հին հռոմեական գրականության գագաթներից մեկն է, պատմում է Հռոմի հիմնադրման առասպելական նախապատմությունը: Տրոյացի հերոս էնեասն ու իր ուղեկիցները Տրոյայի կործանումից հետո հեռանում են

²⁰ Կոչականի այս ձևը Բագրատունու հետևորդամբ Պատրոկլոսի և այլոց անուններում կրկնել է նաև Մկրտիչ Խերանյանը (օրինակ՝ էջ 298), ինչն արդի հայերենում արտաոգ է հնչում:

այրվող քաղաքից, անցնում բազում փորձությունների միջով և հաստատվում Խտալիայում՝ դառնալով ապագա հզոր տերություն հիմնադիրները: Վերգիլիոսը մեծապես ազդվել է Հոմերոսի և՛ «Իլիական»-ից, և՛ «Ոդիսական»-ից:

«Հենեական»-ը բնագրից թարգմանել և հրատարակել են Վենետիկի Մխիթարյան միաբանությունից երկու անգամ: Էդվարդ Հյուրմյուզյանը պոեմը թարգմանել է գրաբար²¹, իսկ Արսեն Ղազիկյանը՝ արևմտահայերեն²²: Հյուրմյուզյանը, հակառակ անհանգ բնագրին, հանգավորել է երկուական տող, Ղազիկյանը՝ ո՛չ: Երկուսն էլ կիրառել են $4 + 4 + 3$ չափը՝ հաճախ մեկ տողը թարգմանելով երկուսով: Ուստի երկու թարգմանությունն էլ «Հենեական»-ի մոտ 10 հազար տողի դիմաց ունեն մոտ մեկ ու կես անգամ ավելի տողեր:

Հյուրմյուզյանի ու Ղազիկյանի թարգմանությունների միջև կան նաև այլ ընդհանրություններ, օրինակ՝ անունների տառադարձման միեկնույն սկզբունքները: Լատիներեն «-ուս»-ով ավարտվող արական անունները, ըստ հնուց եկող ավանդույթի, ստացել են հունական «-ոս» վերջավորությունը, ուստի Վերգիլիոսը դարձել է «Վերգիլիոս», Մարկելլոսը՝ «Մարկեղոս», Անտոնիոսը՝ «Անտոնիոս» և այլն: Չեզոք սեռի Լատիումն էլ հունական կաղապարով դարձել է «Լատիոն»:

Հռոմեական անունները հունականացնելու ակունքները պետք է փնտրել հայ գրականության սկզբնավորման շրջանում, երբ դրանք հայոց լեզու էին թափանցում հունարենի միջոցով (Նոր Կտակարանի, եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրության» և այլ երկերի թարգմանության ընթացքում²³): Այդպես ձևավորված գրական ավանդույթին են հետագայում ենթարկվել նաև մյուս անունները:

Թե՛ Հյուրմյուզյանի, թե՛ Ղազիկյանի թարգմանության մեջ անունների վերջավորությունները մե՛րթ կան, մե՛րթ ոչ՝ թելադրված չափով, ուստի Կեկուլուսի դիմաց ունենք «Կեկուլ» (Հյուրմ.) և «Կեկուլ» (Ղազ.), Լուկագուսի՝ «Լուկագ»,

²¹ Պոբլիոսի Վերգիլեայ Մարոնի *Ենեականին* թարգմանություն ի ձեռն Հ. Եդուարդայ Հիւրմիւզեան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1845:

²² Պոբլիոսի Վերգիլեայ Մարոնի *Ենեական*, բնագրէն աշխարհաբար թարգմանեց Հ. Արսէն Ղազիկեան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1910: Պոեմից մի հատված (X.215–659) տպագրվել է առանձին՝ *Բազմավէպ*, 1910 (Ե–Ձ), 225–231: Լույս են տեսել նաև այդ թարգմանությանը նվիրված գրախոսություններ՝ *Բազմավէպ*, 1910 (Ե), 311–313 (մեջբերված են տարբեր մտավորականների դրվատական կարծիքներ, մասնավորապես՝ Արշակ Չոբանյանի հիացական նամակը), *Բազմավէպ*, 1910 (Ը), 353–358, որտեղ Հ. Ղ. Բժիկյանը գրում է, որ թարգմանությունը լատիներենից է ու ճշգրիտ, պաշտպանում է աշխարհաբար թարգմանությունը՝ որպես հասկանալի, և հանգից հրաժարվելը (չէ՞ որ լատիներեն բնագիրն էլ հանգավորված չէ): Նա նշում է թարգմանության տողերի թիվը՝ 15355, և գովում Վերգիլիոսին հետևյալ խոսքերով. «Այնպիսի հակիրճ ու ցոլաթուրմ նկարներ ունի Մանդուայի կարապը, որ իր ֆսան դարերու ընդմէջէն դեռ կրնայ սրբագրել մեր արդի գրագէտներու ոմանց չափազանց երկար՝ նապաղ նկարագրութիւնները» (355):

²³ Օրինակ՝ հռոմեական Marcus, Paulus անունները դարձել են Մարկոս, Պոլոս:

Քաոսի՝ «Քաւ» (Հյուրմ.), Պալինուրուսի՝ «Պաղինուր» և «Պաղինոր» (Հյուրմ.), Մնեսթեսի՝ «Մնեսթ» (բայց և՛ «Մնէսթէոս» [Հյուրմ.]), Սերգեստոսի՝ «Սերգեստ», Դեդալոսի՝ «Դեդաղ» (նաև՝ «Դեդաղոս» [Հյուրմ.]) և այլն:

Աստվածների ու որոշ հերոսների հռոմեական անունները փոխարինված են համապատասխան հունականներով. Նեպտունուսը՝ «Պիսիդ»-ով կամ «Պիսիդոն»-ով (Հյուրմ.) և «Պոսիդոն»-ով (Ղազ.), Միներվան՝ «Աթենաս»-ով, Վուլկանուսը՝ «Հեփեստոս»-ով, Յունոնան՝ «Հերա»-ով, Մարսը՝ «Արէս»/«Արիս»-ով, Պրոզերպինան՝ «Պերսեփոնե»-ով (Հյուրմ.), Սատուրնուսը՝ «Կրոն»/«Կրոնոս»-ով (Հյուրմ.), Մերկուրիուսը՝ «Հերմէս»-ով (Հյուրմ.), Կերերան՝ «Դեմետեր»-ով (Հյուրմ.), Լիբերը՝ «Դիոնիս»-ով (Հյուրմ.), Տրիվիան (Դիանայի մականունն է)՝ «Արտեմիս»-ով (Հյուրմ.), Ամուրը՝ «Երոս»-ով, Հերկուլեսը՝ «Հերակլես»-ով, Ուլիսեսը՝ «Ոդիսեւս»/«Ոդիս»-ով, տեղանուններից Կարթագենը՝ հունարենում ընդունված «Կարթեդոն»-ով²⁴:

Երբեմն դիցանունները փոխարինվել են հայկական համարժեքներով. Վեներան դարձել է «Աստղիկ», ինչպես հնում և «Իլիական»-ի թարգմանություններում՝ Աֆրոդիտեն, բայց և՛ «Ափրոդիս» (Հյուրմ.), Սատուրնուսը՝ «Ջրուան» (Ղազ.), ինչպես հնում և «Իլիական»-ում՝ Կրոնոսը, իսկ Օրիոնը՝ «Հայկ» (բայց կա նաև «Որիոն», [Հյուրմ.]), Դիանան՝ «Անահիտ», Յուպիտերը՝ «Արամազդ» և «Որմիզդ» (ինչպես հնում և «Իլիական»-ում՝ Զևսը), սակայն նաև՝ «Դիոս» (Հյուրմ., նաև՝ «Զեւս»), Հիդասպեսը (Hydaspes)՝ «Վշտասպ»²⁵ (Հյուրմ.), տեղանուններից Տյուրոսը՝ «Ծուր»²⁶ (Հյուրմ., բայց կա նաև «Տիրոս» [Ղազ.]), Հյուրկանականը՝ «վրկանեան» (Հյուրմ.) և այլն:

Դիդոնայի անունը Հյուրմյուզյանը դարձրել է «Դիդէ», չնայած այդպիսի ձև գոյություն չունի: Լատիներեն անվան ձևն է Dido: Թեք հոլովների հիմքն է Didon-, որտեղից էլ, ուսերենի միջնորդությամբ՝ «Դիդոնա»: Դազիկյանը, հավանաբար Հյուրմյուզյանի հետևությամբ, օգտագործել է նույն «Դիդէ» ձևը: Նշենք, որ Եվսեբիոսի «Ժամանակագրության» մեջ հանդիպում են «ի Դիդեայ» և «ի Դիդայ» (= a Didone) բացառական հոլովի ձևերը²⁷: Միգուցե առաջինը՝ «ի Դիդեայ», Հյուրմյուզյանն ընկալել է որպես թեք հոլով՝ հունարեն ենթադրյալ

²⁴ Այն առկա է Ե դարի առաջին կեսին հունարենից թարգմանված Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրության» մեջ. Եւսեբի Պամփիլեայ Կեսարացու ժամանակականք երկամասնեայ, աշխատասիրութեամբ Մ. Ավգերեանց, Վենետիկ, 1818, Մասն Ա, էջ 383:

²⁵ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ (Բ 25) պարսից Դարեհ արքան «Վշտասպեան» է, այսինքն՝ Վշտասպի որդի: Անունը համապատասխանում է հունահռոմեական աղբյուրների Hystaspes-ին: Hydaspes-ն էլ նման է այդ անվանը:

²⁶ «Ծուրը» որպես «Տյուրոսի» հայերեն տարբերակ հանդիպում է արդեն Աստվածաշնչում. օրինակ՝ Բ Մակաբ., Գ 18, 32, 44, Եզեկ., ԻԹ 20:

²⁷ Տե՛ս Ավգերյանի հրատարակության Մասն Բ, էջ 148, 150 և հմմտ. բյուզանդացի պատմիչ Գեորգիոս Սինկելլոսի՝ Եվսեբիոսից մեջբերման մեջ՝ ὑπὸ Διδού (211.23):

«Դիդէ» ուղղականից, ուստի շրջանառության մեջ է դրել այդ ձևը (մինչդեռ եթե «Ժամանակագրության» մեջ հանդիպեր անվան ուղղական հոլովը, ապա այն հավանաբար, հունարեն Διδώ-ին համապատասխան, կլիներ «Դիդո»): Կամ էլ Հյուրմյուզյանը պարզապես «-է»-ով տարբերակ է հորինել՝ իբրև հայերենում կնոջ անվանն ավելի հարիր ձև: Այդպես նաև «-ա»-ով ավարտվող որոշ իգական անուններ ստացել են նույն (հունարենին բնորոշ) «-է» վերջավորությունը. Լաոդամիան դարձել է «Լաոդամէ» (այստեղ «-է»-ն «-իա»-ի փոխարեն է), Ամատան՝ «Ամատէ» (Հյուրմ.): Մինչդեռ, օրինակ, Քիմերան կորցրել է իգական վերջավորությունը՝ դառնալով «Քիմեր» (Հյուրմ.) կամ «Քիմեո» (Ղազ.):

Էնեասի անունը երկու տարբերակում էլ «Ենէաս» է, և առհասարակ, հին թարգմանությունների ավանդույթով, բառասկզբի E-ն բաղաձայնից առաջ տառադարձված է ե, ինչպես՝ «Եւոդոս»/«Եւոդ» (= էոլոս), «Երոս», իսկ էտրուսկները կոչվում են «Ետրուրք» (Հյուրմ.). անվան այս տարբերակի հիմքում էտրուսկների (Etrusci) երկրի անունն է Etruria: Որոշ անունների մեջտեղում էլ «ու»-ի փոխարեն «ո» է. օրինակ՝ Պուբլիուսի փոխարեն «Պոբլիոս» (Հյուրմ.) և «Պոբլիոս» (Ղազ.), տվյալ դեպքում՝ հունարենի ազդեցությամբ (Πόπλιος, Թեպետ սա նաև լատիներենի հնագույն ձևն է): Անուբիսի փոխարեն «Անոբիս» է (Հյուրմ.), իսկ Ուֆենսը (թեք հոլովների հիմքն է Ufent-) դարձել է «Ուփենտ» (Հյուրմ.): Երկու թարգմանության մեջ էլ նկատվում է անունները «հունականացնելու», իսկ հնարավորության դեպքում՝ նաև «հայկականացնելու» միտում: Ակնհայտ է, որ Ղազիկյանն ազդվել է անունները տառադարձելու և դրանց համարժեքներ ընտրելու Հյուրմյուզյանի սկզբունքներից:

Հոգվածի վերջում ներկայացնում եմ անունների տառադարձման այն սկզբունքները, որոնց հետևել ենք Գոհար Մուրադյանը և ես՝ Հոմերոսի ու Վերգիլիուսի (և այլ հեղինակների) մեր թարգմանություններում: Ելնելով մեր հիմնական՝ բնագրերին բոլոր առումներով հնարավորինս հարազատ մնալու սկզբունքից, անունները տառադարձել ենք հետևյալ կերպ: Կրկնակի բաղաձայնները մեծ մասամբ պահպանել ենք՝ Ապոլլոն, Աքիլլես, Կամիլա, Սկիլլա, Իլլիրական ծոց, Մարկելլուս, Պալլաս, Աննա, Պիռոոս, Տիրրուս, տիրենացի, Ակկա, Ամմոն, Մեմփական, Արքիպպոս, Ագրիպպա, Կասսանդրա, Մեսսապուս և այլն: Բացառություն ենք արել այն դեպքերում, երբ անունը հայերենում վաղուց ունի իր կայուն ձևը. օրինակ՝ Յուպիտեր (Juppiter) կամ Ապենինուս (Appenninus. հմմտ. Ապենինյան լեռներ):

Երկրորդ հոլովման արական սեռի հատուկ անունների պարագայում լատիներեն ուղղական հոլովի -US վերջավորությունը սովորաբար տառադարձել ենք «-ուս», եթե խոսքը հռոմեացիների, հռոմեական աստվածների և Իտալիայի հին

բնակիչների ու տեղանունների մասին է (Վերգիլիոս, Լատինոս, Տուրնոս, Նեպտունոս, Սատուրնոս, Վուլկանոս, Մերկուրիոս, Հռոմուլոս, Գրակքոս, Ինուոս, Սիլվիոս, Օրկոս, Ավերնոս և այլն): Իսկ հույների, տրոյացիների և այլ ոչ իտալացիների ու ոչ իտալական տեղանունների պարագայում, նաև լատինե-րեն բնագիր թարգմանելիս (որտեղ հունական անունների վերջավորությունը նույնպես -ուս է) պահպանել ենք հունարենի «-ուս» վերջավորությունը՝ Պրիամոս, Զեփիրոս, Եվրոս, Կլոանթոս, Հելենոս, Սերգեստոս, Պալինուրոս, Եվանդրոս²⁸, Մուսեոս, Ինաքոս, Ակրիսիոս, Գիարոս, Միկոնոս, Պարոս, Էպիրոս, Տյուրոս, Քսանթոս, Դելոս, Օլիմպոս, Տարտարոս և այլն (այստեղ էլ կան բացառություններ, էնեասի որդին, օրինակ, տրոյացի է, բայց քանի որ պիտի դառնա հռոմեացիների նախահայրերից մեկը, ուստի նրա անունները տառադարձել ենք «-ուս»-ով՝ Ասկանիոս-Յուլոս): Նույն տրամաբանությամբ, դարձյալ բացառություններով, պահպանել ենք լատինեներեն «-ում»-ը (Լատիում, Պալլանտում, Պալլադիում, Դրեպանում, Լավինիում) կամ վերականգնել հունարեն «-ոն»-ը (Իլիոն, Պերգամոն): Իսկ հին հունարենից մեր թարգմանություններում անունների վերջավորություններն առհասարակ նույնն են բնագրային ձևերի հետ (Խուսքն արական -ոս, -ես, -աս, իգական -ա, -ե և չեզոք սեռի -ոն վերջավորությունների մասին է): Հունարեն իգական սեռի անունները, որոնք վերջանում էին «ե/ի»-ով (օրինակ՝ Հեսիոնե, Կրեստե), բայց լատինեներեն բնագրերում ստացել են «ա» վերջավորությունը (Hesiona, Creta), վերականգնել ենք նախնական հունական ձևով (նշենք, սակայն, որ թե՛ հունարենում, թե՛ լատինեներենում երկու ձևն էլ առկա են):

Որպես Փ-ի և Խ-ի համարժեքներ կիրառել ենք փ և ֆ (օրինակ՝ Քարիսներ, Քիրոն, Փիլոկտեստես, Փիլևս, Փիլակե և այլն)՝ ըստ այդ հնչյունների դասական շրջանի արտասանության, ի տարբերություն միջնադարյան և ժամանակակից հունարենի ֆ և ք հնչողության: Այս կանոնից որոշ բացառություններ ենք արել ֆ-ի դեպքում՝ զուտ բարեհնչության նկատառումով. օրինակ՝ Ֆեդրա, Ֆիդիաս, նիմֆա, Սֆինքս (Փեդրա, Փիդիաս, նիմփա, Սփինքս տառադարձումն անբարեհունչ կլիներ): Փ-ի միօրինակ տառադարձումն առհասարակ բարդ խնդիր է, և առանձին դեպքերում մենք էլ տարբեր թարգմանություններում շեղվել ենք միօրինակությունից՝ կիրառելով զուգաձևություններ, օրինակ՝ Սոփոկլես/Սոֆոկլես, Ափրոդիտե/Աֆրոդիտե (հաշվի առնելով, որ ֆ-ով ձևերն այսօր ականջի համար ավելի սովորական են դարձել):

Ջայնավորների ու երկհնչյունների պարագայում հիմնականում ընդունելի ենք համարել ուշ արտասանությունը՝ ՁԼ, ՕԼ — է (երկրորդը՝ նաև Ի), ԵԼ, Ս — ի: Հակառակ դեպքում «էսքիլոս»-ի փոխարեն կունենայինք «Այսքուլոս», «էդի-

²⁸ Այս անունը լատինականացվել է թե՛ Euandrus, թե՛ Euander ձևերով:

պուս»-ի փոխարեն՝ «Օյդիպուս», «Դելփի»-ի փոխարեն՝ «Դելփոյ» և այլն: Այստեղ էլ կան բացառություններ՝ Այաս (ոչ թե էաս), Մեդեա (ոչ թե Մեդիա), «Անտիկեյա» (ոչ թե Անտիկլիա) և այլն (նշենք նաև, որ «Մեդեա» անվան մեջ, հետևելով ավանդույթին, չենք տառադարձել ըլ երկհնչյունի երկրորդ՝ լ ձայնավորը): Սակայն Ղ-ի դեպքում նախընտրել ենք դասական ե/է (ոչ թե ուշ շրջանի ի) արտասանությունը, հմմտ., ասենք, նույն «Մեդեա» (ոչ թե «Միդեա»), «Դեմոփոն» (ոչ թե «Դիմոփոն»), «Հերակլես» (ոչ թե «Իրակլիս») անունները: Իսկ ՅՍ երկհնչյունը (որը դասական շրջանում արտասանվել է էու) տառադարձել ենք և (Պերսես), բառակցքում՝ եվ (Եվրիպիդես, ոչ թե էվրիպիդես), քանի որ հունական համապատասխան անունները հայերենում դասական շրջանից ի վեր այդպես են տառադարձվել (օրինակ՝ Եվսեբիոս, Եվրոպա):

Անունների վերջավորությունները, բանաստեղծական չափի թելադրանքով, զանց ենք առել միայն բացառիկ դեպքերում, երբ այլ լուծման հնարավորություն չի եղել («Ակեսասամեն», փոխանակ՝ «Ակեսասամենոս», «Աքեմենիդ», փոխանակ՝ «Աքեմենիդես» և այլն):

R-ով սկսվող անունները տառադարձելիս «ռ»-ից առաջ «Հ» ենք գրել հետևյալ դեպքերում. 1) Դրանք հունական ծագում ունեն (հունարենում բառակցքի Թ-ն պարտադիր թավ հագագ էր կրում՝ ρ [= լատիներեն rh], և հայերենում փոխառված նման բառերը սկսվում են հ-ով, օրինակ՝ հոետոր, Հոիփսիմե). ուստի՝ Հռադամանթիս, Հոեսոս (թրակացի), Հոետոս, հոետեուհի (= տրոյուհի), հոետեացի (= տրոյացի), հոետեական (= տրոյական): 2) Հնում հայերեն են մտել հունարենի միջոցով և դարձել ավանդական՝ Հոոմ, Հոոմուլուս, Հոեմուս (որոնց նմանությունը էլ տառադարձել ենք Հոեմուլուս անունը): 3) Լատիներեն գրությունը սկսվում են Rh-ով, եթե անգամ վերաբերում են իտալացիների. օրինակ՝ Հոետուս, Հոետուս: Մնացած դեպքերում բառերը սկսել ենք «ռ»-ով՝ ռուտուլներ, Ռամնես (ոմն ռուտուլ), Ռոգեյան գյուղեր, Ռուֆրե (Կամպանիայում), Ռապո (ոմն էտրուսկ):

Այն անունների դեպքում, որոնց ուղղական հղումը տարբերվում է թեք հոլովներում տեսանելի բառահիմքից, հետևել ենք ուղղականի ձևին՝ Պալլաս, Թիրերիս (Տիրերիս գետի անվան՝ Վերգիլիոսի նախընտրած տարբերակը), Իրիս, Ատլաս, Պելոպս, Մագնես, Արտեմիս և այլն (այլապես պիտի գրեինք «Պալլադ», եթե խոսքն Աթենա-Միներվայի մասին է, և «Պալանտ»՝ Եվանդրոսի որդու պարագայում), «Թիրերիդ», «Իրիդ», «Ատլանտ», «Պելոպ», «Մագնետ», «Արտեմիդ» և այլն: Բացառություն են որոշ հատկապես հոգնակի թվով անուններ, ասենք՝ գիգանտներ, Կիկլոպներ, օրեագներ, Կիկլադներ (այլ ոչ գիգասներ, Կիկլոպսներ, օրեասներ, Կիկլասներ) և այլն, որովհետև հունարենում ու լատիներենում դրանց հոգնակին կազմվում է թեք հոլովների հիմքից, իսկ եզակին քիչ է հանդիպում:

Այլ բացառություն են կազմում հետևյալ տիպի անունները՝ Կուպիդոն

(Cupido), Ակվիլոն (Aquila), Գորգոն/Գորգոնա (Gorgo) և այլն: Հայերենում դրանք առանց բառավերջի «ն»-ի անսովոր կհնչեին, քանզի նման անուններն ավանդաբար մեր լեզու են թափանցել հունարենի միջոցով, իսկ հունարենում, եթե դրանք կային («Գորգոն»-ն անշուշտ կար), ապա բառավերջում ունեին «ն» (v): Այդպես նաև՝ Կարթագեն (և ոչ Կարթագո [Carthago]). տվյալ դեպքում անվանաձևը փոխառված է ռուսերենից (Карфаген)՝ «Փ-թ»-ի ճշտմամբ (հունարեն անվանաձևն էր՝ Կարքեդոն [Καρχηδών]): Լատիներեն՝ Juno-ի համար հայերենում ընդունված է ռուսերենից փոխառված «Յունոնա» անվանաձևը (որ կազմվել է թեք հոլովների Junon- հիմքից՝ ռուսերեն իգական a վերջավորությամբ): Մենք օգտագործել ենք գերագույն դիցուհու (հունական Հերայի) անվան թե՛ այդ և թե՛ «Յունոն» ձևերը: Կարթագենի առասպելական հիմնադիր Թագուհու անվան լատիներեն ձևն է Dido (Դիդո): Հայերենում ընդունված են արհեստական «Դիդոնե» (պատահաբար համընկնում է իտալերեն Didone-ի հետ) և ռուսերենից փոխառված «Դիդոնա» ձևերը (ինչպես որ Յունոնայի դեպքում՝ թեք հոլովների Didon- հիմք + a): Թարգմանություն մեջ կիրառել ենք «Դիդոնա» և «Դիդո» ձևերը:

Փեղեցկություն ու սիրո աստվածուհու անվան լատիներեն ուղիղ ձևն է՝ Venus, իսկ հայերենում սովորական «Վեներա»-ն՝ կազմված անվան թեք հոլովների հիմքից (Vener-), դարձյալ փոխառված է ռուսերենից: Մենք օգտագործել ենք թե՛ «Վեներա», թե՛ «Վենուս» ձևերը: Այդպես նաև՝ «Կերերա» ու «Կերես» (Ceres. նա հողագործության ու պտղաբերության աստվածուհին է՝ հունական Դեմետերը):

Կան և այլ դեպքեր, երբ, հակառակ անունների հունարեն կամ լատիներեն գրություն, կիրառել ենք հայերենում ավանդական ձևեր՝ «Ուլիսես» (և ոչ Ուլիքսես [Ulixes]), «Ամուր» (և ոչ Ամոր [Amor]), «Բաքոս» (և ոչ Բակքոս [Bacchus] կամ հունարեն Բակքոս [Βάκχος]), «Հելենե» (և ոչ Հելենա [Helena], կամ հունարեն Հելենե [Ελένη]): Բայց «Աթենա»-ի դեպքում հրաժարվել ենք ավանդական «Աթենաս» սխալ տարբերակից:

Ձայնավորների նախորդող «ա» և «ո» տառերից հետո չենք գրել «յ», եթե հունարենում կամ լատիներենում չկա համապատասխան Vի հնչյունը. օրինակ՝ Պասիփաե, Քլոե, Իփիհոե:

Առասպելական էակների խմբերի անունները գրել ենք մեծատառով, եթե նրանք փոքրաթիվ են (Հարպիաներ, Սիրեններ, Մուսաներ, Եվմենիդներ, Ֆուրիաներ, [դարբին] Կիկլոպներ), և փոքրատառով՝ եթե նրանց թիվը մեծ է կամ հայտնի չէ (տիտաններ, կենտավրոսներ, նիմֆաներ, օրեադներ):

Լատիներենում բառաշեշտը վերջին վանկի վրա չի լինում, իսկ հայերենում, ընդհակառակը, այն վերջնավանկ է: Ուստի, հատուկ անուններն իբրև կոչական օգտագործելիս, թարգմանիչը կանգնում է դժվարության ու երկընտրանքի

առաջ: Մենք ազատ ենք վարվել՝ հետևելով զուտ բարեհնչության սկզբունքին (օրինակ՝ «Սերրա՛նուս», «Մա՛քսիմուս», «Էրա՛տո» և այլն):

Սրանք են անունների տառադարձման այն հիմնական սկզբունքները, որոնք մենք, հաշվի առնելով հին ու նոր (ներառյալ՝ Մխիթարյանների) թարգմանությունների փորձը, որդեգրել ենք հունա-հռոմեական երկերի մեր նոր թարգմանություններում: Ինչպես երևում է ասվածից, մեզ հիմնականում հաջողվել է հետևել որոշակի կանոնների, բայց առանձին դեպքերում՝ ոչ, և ստիպված ենք եղել կիրառելու զուգաձևություններ: Հունական ու լատինական անունների հայերեն տառադարձումը բարդ խնդիր է, և լուծումների փնտրտուքը դեռ շարունակվում է:

ARAM TOPCHYAN

THE GRECO-ROMAN PROPER NAMES IN THE MECHITARISTS' ARMENIAN TRANSLATIONS AND THE NEW RULES OF THEIR transliteration

Key words: Homer, Virgil, *Iliad*, *Aeneid*, Grabar, Greek, Latin, transliteration, translation, ending, phonetic change, Grecizing, Armenizing.

Homer's *Iliad* was translated into Grabar twice, by Eghia T'omachean (Venice, 1843) and Arsen Bagratuni (Venice, 1964). Both translators in general strove to render the Greek names correctly, Bagratuni, more successfully. There are some differences in their transliterations (e.g. Bagratuni transliterated λ by լ, while T'omachean by η) and in the rendering of the Greek endings. Or the name of Achilles is transliterated in different ways, in conformity with the Greek form Ἀχιλλεύς and the Latin form Achilles, and of Ajax, in conformity with the Greek form Αἴας and the Latin Ajax. In some cases the meter forced them to omit the Greek endings. Some names, following the tradition of old translators are replaced by their Armenian equivalents, e.g. Zeus became Aramazd, Cronus – Zruan, and Aphrodite – Astghik.

Edward Hiwrmwzean translated Virgil's *Aeneid* into Grabar (Venice, 1845), and Arsen Ghazikean into Western Armenian (Venice, 1910). They applied similar principles of rendering proper names. The main common feature is that the Roman names got Greek endings due to following the tradition of old translations from Greek (e.g. of the New Testament, the *Chronicle* by Eusebius of Cesarea, etc). The other similarity is that the names of Roman Gods and of some heroes are replaced by their Greek equivalents (Juno by Hera, Neptune by Poseidon, Vulcan by Hephaestus, Ulysses by Odysseus, etc.), and some by their Armenian equivalents, so Venus

has become Astghik (though sometimes her name is rendered Aphrodite), Saturn – Zruan, Jupiter – Aramazd, Orion – Hayk, and Diana – Anahit.

In the end of the article, the author has presented the rules of transliteration of proper names which he and Gohar Muradyan follow in their new translations of Greco-Roman classics.

АРАМ ТОПЧЯН

ГРЕКО-РИМСКИЕ СОБСТВЕННЫЕ ИМЕНА В АРМЯНСКИХ ПЕРЕВОДАХ МХИТАРИСТОВ И НОВЫЕ ПРИНЦИПЫ ИХ ТРАНСЛИТЕРАЦИИ

Ключевые слова: Гомер, Вергилий, “Илиада”, “Энеида”, грабар, греческий, латынь, транслитерация, перевод, окончание, фонетическое изменение, грецизация, арменизация.

“Илиада” Гомера дважды переводилась на грабар, Егия Томачяном (Венеция, 1843) и Арсеном Багратуни (Венеция, 1964). Оба переводчика в целом стремились к точной передаче греческих имен, Багратуни – в большей степени. Есть некоторые различия в транслитерации (например, λ – l у Багратуни и η у Томачяна) и в передаче окончаний. Или по-разному переданы имена Ахилла (по греческой форме Ἀχιλλεύς и латинской Achilles) и Аякса (по греческой форме Αἴας и латинской Ajax). Иногда стихотворный размер заставлял опускать окончания. Некоторые имена, следуя традиции древних переводчиков, заменены на армянские эквиваленты: Зевс на Арамазда, Крон на Зрвана, Афродита на Астгик.

Эдуард Юрмюзян перевел “Энеиду” на грабар (Венеция, 1845), а Арсен Газикиан на западноармянский (Венеция, 1910). Принципы передачи имен у них схожие. Основная общая черта – римские имена получают греческие окончания, что восходит к традиции таких древних переводов с греческого, как Новый Завет, “Хроника” Евсевия Кесарийского и т. д. Другое сходство – имена римских богов и некоторых героев заменены на греческие эквиваленты (Юнона на Геру, Нептун на Посейдона, Вулкан на Гефеста, Уллис на Одиссея и т. д.), а некоторые – на армянские, так что Венера стала Астгик, Сатурн Зрваном, Юпитер Арамаздом, Орион стал Айком, а Диана – Анаит.

В конце статьи автор представляет принципы транслитерации собственных имен, которым они совместно с Гоар Мурадян следуют в своих новых переводах греко-римских классиков.